# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Դատական դեպարտամենտի կարիքների համար ներքին աուդիտի ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-23/03» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «12» սեպտեմբերի 2023թ.
ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Նաիրի Գալստյան՝** Դատական դեպարտամենտի ղեկավարի առաջին տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար, Դատական դեպարտամենտի ղեկավարի պարտականությունները կատարող

*հանձնաժողովի անդամներ՝*

**Արուս Հայրապետյան՝** Դատական դեպարտամենտի ղեկավարի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար

**Արշակ Վարդապետյան՝** Դատական դեպարտամենտի ղեկավարի ֆինանսատնտեսական հարցերով տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար

**Դավիթ Գասպարյան՝** Դատական դեպարտամենտի ղեկավարի խորհրդականի ժամանակավոր պաշտոնակատար

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Գայանե Դադիվանյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

**1. Տեղեկություն՝ «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-23/03» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.**

- հայտերը ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել ընթացակարգի հայտարարությունը և հրավերը eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) հրապարակվելու օրվանից հաշված 11-րդ օրվա (08.09.2023թ.)՝ ժամը 11:00-ն,
- հայտերը բացվել են էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով,
- էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 11.09.2023թ.՝ ժամը 11:00-ին:

**2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ծառայության գնման գնի վերաբերյալ.**

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայության գնման գինը.

| Չափաբաժնի համարը | Չափաբաժնի անվանումը | Գնման հայտով սահմանված գնման գինը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|
| 1 | Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ՝ Դատական դեպարտամենտի ներքին աուդիտի ծառայություն | 3600000 |

**3. Էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝**

| Մասնակցի անվանումը (անունը) | Մասնակցի գործունեության հասցեն |
|---|---|
| Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ | Արգիշտի 7, Դոմ Մոսկվի, ք. Երևան, ՀՀ |
| ՍՄԱՐՏ ԱՈՒԴԻՏ ՍՊԸ | ք. Երևան, Սվաճյան 32, բն. 18 |
| Ֆոր Էյ Քնսալթինգ ՓԲԸ | ք. Երևան, Նալբանդյան 50/136 |

**4. Տեղեկատվություն՝ Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.**

Հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

**5. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.**

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

**6. «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-23/03» ծածկագրով հակադարձ աճուրդի արդյունքները.**

| Չ/Հ | Մասնակցի անվանումը (անունը) | Նախնական առաջարկ | | | Վերջին առաջարկ | | | Մասնակցի կարգավիճակ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Արժեք (ՀՀ դրամ) | ԱԱՀ | Գին (ՀՀ դրամ) | Արժեք (ՀՀ դրամ) | ԱԱՀ | Գին (ՀՀ դրամ) | |
| 1 | Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ | 4000000 | 20% | 4800000 | 800000 | 20% | 960000 | |
| 1 | ՍՄԱՐՏ ԱՈՒԴԻՏ ՍՊԸ | 3000000 | 20% | 3600000 | 970000 | 20% | 1164000 | |
| 1 | Ֆոր Էյ Քնսալթինգ ՓԲԸ | 3000000 | 20% | 3600000 | 2880000 | 20% | 3456000 | |

Էլեկտրոնային հակադարձ աճուրդն ավարտվել է՝ աճուրդն ամփոփվել է 11.09.2023թ.՝ ժամը 11:30-ին և Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ-ն Համակարգի կողմից համարվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

**7. Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտի ուսումնասիրության նպատակով հանձնաժողովը որոշեց նիստը հետաձգել և հաջորդ նիստը հրավիրել 2023թ. սեպտեմբերի 19-ին՝ ժամը 11:30-ին, Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնի վարչական շենքում (հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1):**

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ ____________________ Նաիրի Գալստյան

Անդամներ՝

____________________ Արուս Հայրապետյան

____________________ Արշակ Վարդապետյան

____________________ Դավիթ Գասպարյան

Քարտուղար՝ ____________________ Գայանե Դադիվանյան

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3**

Դատական դեպարտամենտի կարիքների համար ներքին աուդիտի ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-23/03» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «19» սեպտեմբերի 2023թ.

ժամը՝ 11:30

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Նաիրի Գալստյան՝** Դատական դեպարտամենտի ղեկավարի առաջին տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար, Դատական դեպարտամենտի ղեկավարի պարտականությունները կատարող

*հանձնաժողովի անդամներ՝*

**Արշակ Վարդապետյան՝** Դատական դեպարտամենտի ղեկավարի ֆինանսատնտեսական հարցերով տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար

**Դավիթ Գասպարյան՝** Դատական դեպարտամենտի ղեկավարի խորհրդականի ժամանակավոր պաշտոնակատար

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Գայանե Դադիվանյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Նիստից բացակայում էր՝

**Արուս Հայրապետյան՝** Դատական դեպարտամենտի ղեկավարի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար

**1. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

1.1. Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա է հրավերով պահանջվող էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1):

Ներկայացված հայտում առկա ռուսերեն լեզվով էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (ЗАЯВЛЕНИЕ УЧАСТИЕ В ЭЛЕКТРОННОМ АУКЦИОНЕ (Приложение № 1)) գնահատող հանձնաժողովի կողմից չի քննարկվել:

1.2. Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ-ի հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունում (Հավելված 1) նշված է, որ Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ-ն հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ: Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացվել է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ համաձայն Հավելված N 1.2-ի, որը գնահատող հանձնաժողովի կողմից չի քննարկվել, քանի որ հրավերի ՄԱՍ I-ի 4.3-րդ կետի 1)-ին ենթակետի «ե)» պարբերության պահանջների համաձայն, ՀՀ ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը ներկայացնում է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ համաձայն հավելված 1.3-ի: Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է հրավերով պահանջվող Հավելված N 1.3-ը:

1.3. Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է ընկերության կողմից հաստատված ներքին աուդիտի ծառայության մատուցման առանձին տարրերի գնացուցակը (գնացուցակի օրինակելի ձևը կցված է հրավերին):

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**2. Տեղեկատվություն՝ հանձնաժողովի նիստը կասեցնելու վերաբերյալ.**

«ԴԴ-ԷԱՃԾՁԲ-23/03» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8.19-րդ կետի համաձայն՝ տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում մասնակիցը իր կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում և ներկայացնում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի հավաստագիրը պետք է զետեղված լինի «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում:

Այս կապակցությամբ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում ներառված՝ էլեկտրոնային թվային ստորագրությունով հաստատված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1) ուսումնասիրելիս, անհրաժեշտություն է առաջացել վերոնշյալ փաստաթղթի էլեկտրոնային թվային ստորագրության վավերականության վերաբերյալ ստանալ տվյալ ոլորտը կարգավորող մարմնի՝ «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ /ԷԿԵՆԳ/» ՓԲԸ-ի դիրքորոշումը:

Վերոգրյալով պայմանավորված՝ հանձնաժողովը որոշեց.

- նիստը կասեցնել և Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարության (Հավելված 1) էլեկտրոնային թվային ստորագրության վավերականության վերաբերյալ դիրքորոշում ստանալու նպատակով դիմել «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ /ԷԿԵՆԳ/» ՓԲԸ-ին,
- հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ից համապատասխան գրության ստացմանը հաջորդող աշխատանքային օրը՝ ժամը 11:00-ին, Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնի վարչական շենքում (հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1):

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ ____________ Նաիրի Գալստյան

Անդամներ՝

____________ Արշակ Վարդապետյան

____________ Դավիթ Գասպարյան

Քարտուղար՝ ____________ Գայանե Դադիվանյան

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4**

Դատական դեպարտամենտի կարիքների համար ներքին աուդիտի ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-23/03» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «25» սեպտեմբերի 2023թ.
ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նիստը նախագահող՝*

**Արուս Հայրապետյան՝** Դատական դեպարտամենտի ղեկավարի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար

*հանձնաժողովի անդամներ՝*

**Արշակ Վարդապետյան՝** Դատական դեպարտամենտի ղեկավարի ֆինանսատնտեսական հարցերով տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար

**Դավիթ Գասպարյան՝** Դատական դեպարտամենտի ղեկավարի խորհրդականի ժամանակավոր պաշտոնակատար

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Գայանե Դադիվանյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Նիստից բացակայում էր՝

**Նաիրի Գալստյան՝** Դատական դեպարտամենտի ղեկավարի առաջին տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար, Դատական դեպարտամենտի ղեկավարի պարտականությունները կատարող

*Համաձայն ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 26-րդ կետի 1-ին ենթակետի՝ նիստը նախագահում է Արուս Հայրապետյանը:*

**1.** Գնահատող հանձնաժողովի 19.09.2023թ. նիստի N 3 արձանագրության 2-րդ կետում նշված հարցի վերաբերյալ դիրքորոշում ստանալու նպատակով «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ /ԷԿԵՆԳ/» ՓԲԸ-ին ուղղված 19.09.2023թ. N ԴԴ-3-Ե-6739 գրությանը (կցվում է) ի պատասխան «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ից 2023 թվականի սեպտեմբերի 22-ին ստացվել է 20.09.2023թ. հ.3553 գրությունը (կցվում է):

**2. Տեղեկատվություն՝ ՀՀ ֆինանսների նախարարությունից 2023 թվականի սեպտեմբերի 20-ին ստացված N 03/26-1/18052-2023 գրության և «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-23/03» ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ.**

2023 թվականի սեպտեմբերի 20-ին ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացվել է N 03/26-1/18052-2023 գրությունը (այսուհետ՝ նաև Գրություն) (կցվում է), որում նշված է, որ 11/09/2023թ. ժամը 11:24-ից մինչև ժամը 11:58-ը էլեկտրոնային աճուրդների համակարգը եղել է անհասանելի, ինչի արդյունքում խոչընդոտվել է ինչպես ժամը 11:24-ից մինչև ժամը 11:58-ն անցկացվելիք աճուրդների, այնպես էլ նշված ժամանակահատվածում հրավերներով հայտերի

ներկայացման վերջնաժամկետ սահմանված ընթացակարգերին մասնակցության հայտերի ներկայացման բնականոն ընթացքը: Գրությանը կից ներկայացված է խափանված չափաբաժինների և ընթացակարգերի ցանկը, որում ներառված է նաև «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-23/03» ծածկագրով գնման ընթացակարգը («ԴԴ-ԷԱՃԾՁԲ-23/03» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում էլեկտրոնային աճուրդի (հակադարձ աճուրդի) սկիզբ էր սահմանված 11.09.2023թ.-ի ժամը 11:00-ն):

Միաժամանակ Գրությամբ հայտնվել է, որ ՀՀ կառավարության 02/05/2019թ. N 516-Ն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված գնման ընթացակարգը (տվյալ չափաբաժինը) «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարվում է չկայացած, եթե տվյալ ընթացակարգի շրջանակում սահմանված հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալու պահի դրությամբ համակարգը խափանված է:

**Վերոգրյալով պայմանավորված՝ հանձնաժողովը որոշեց.**

- հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության N 03/26-1/18052-2023 գրությունը՝ «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-23/03» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն,

- հաստատել «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-23/03» ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը (կցվում է):

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի

Նիստը նախագահող՝ ________________ Արուս Հայրապետյան

Անդամներ՝ ________________ Արշակ Վարդապետյան

________________ Դավիթ Գասպարյան

Քարտուղար՝ ________________ Գայանե Դադիվանյան

# ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

## ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

*0010, ք.Երևան, Կորյունի 15/1, Հեռ: (00 37410) 511-773,* www.court.am

**№ ԴԴ-3-Ե-** 6739

**« 19 » սեպտեմբերի 2023թ.**

**«ԷԿԵՆԳ» ՓԲԸ-Ի ՏՆՕՐԵՆ ԼԵՈՆԻԴ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ**

*Հարգելի՛ պարոն Ավետիսյան,*

ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 11-րդ ենթակետով սահմանված է, որ տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում: Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Այս կապակցությամբ՝ կից ներկայացնում ենք Դատական դեպարտամենտի կարիքների համար ներքին աուդիտի ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-23/03» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերը և խնդրում հնարավորինս սեղմ ժամկետում տալ կարծիք նշված փաստաթղթերից էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունում (Հավելված 1) մասնակցի կողմից դրված էլեկտրոնային թվային ստորագրության հիշյալ նորմով սահմանված պահանջներին համապատասխանության վերաբերյալ (Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ-ի հայտով ներկայացված իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը (Հավելված N 1.2) և «ЗАЯВЛЕНИЕ УЧАСТИЕ В ЭЛЕКТРОННОМ АУКЦИОНЕ (Приложение № 1)» փաստաթուղթը գնահատող հանձնաժողովի կողմից չեն քննարկվել):

Առդիր՝ 1 ֆայլ:

**ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼ**

**ԱՐՇԱԿ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ**

*Կատ.՝ Նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչություն, Գնումների համակարգման բաժին*
*Հեռ.՝ /+37410/ 511-783, 511-788*

**Հավելված 1**
**ԴԴ-ԷԱՃԾՁԲ-23/03 ծածկագրով**
**Էլեկտրոնային աճուրդի հրավերի**

# ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*
# Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու

Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցել Դատական դեպարտամենտ-ի կողմից «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-23/03» ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի (այսուհետ՝ ընթացակարգ) 1 չափաբաժնին (չափաբաժիններին) և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ -ն հայտնում և հավաստում է, որ հանդիսանում է Հայաստանի Հանրապետություն ռեզիդենտ: Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ -ի հարկ վճարողի հաշվառման համարն է՝ 02618043,
բանկային հաշվեհամարն է՝ 205202218868l001,
գործունեության հասցեն է՝ Արգիշտի 7, Դոմ Մոսկվի, ք. Երևան, ՀՀ,
էլեկտրոնային փոստի հասցեն է՝ asatryan.albert@yahoo.com,
հեռախոսահամարն է՝ +37499543388,
ռուսերեն լեզվով անվանումն է՝ Кроу энд Асатрянс ООО:
Սույնով Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ-ն հայտարարում և հավաստում է, որ

1) բավարարում է ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել որակավորման ապահովում
2) ընթացակարգին մասնակցելու շրջանակում՝
• թույլ չի տվել և (կամ) թույլ չի տալու անբարեխիղճ մրցակցություն, գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն,
• բացակայում է հրավերով սահմանված՝ Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ-ին փոխկապակցված անձանց և (կամ) Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ-ի կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ-ին պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության դեպք:
• ստորև ներկայացնում է հայտը ներկայացնելու օրվա դրությամբ այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավել քան տաս տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված

շահույթի տասնհինգ տոկոսից ավելին (իրական շահառուներ)** և հավաստում, որ իրական շահառուների մասին ներկայացված տեղեկատվությունը իրական է և չի պարունակում ոչ հավաստի տեղեկություններ:

| N | Անունը Ազգանունը Հայրանունը | ՀՀ քաղաքացիների համար՝ նույնականացման քարտի կամ անձնագրի կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը | Օտարերկրյա քաղաքացիների համար համապատասխան երկրի օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը |
|---|---|---|---|
| 1 | | | |

3) ապահովված է դիմում-հայտարարությունը ներկայացնելուց հետո էլեկտրոնային աճուրդի համակարգի կողմից տրամադրված եզակի ծածկագրի (PIN կոդը) անվտանգությունն ու գաղտնիությունը և դրա օգտագործմամբ էլեկտրոնային աճուրդի համակարգում ընթացակարգին մասնակցելուց բխող ցանկացած գործողություն կատարվում է համապատասխան լիազորություն ունեցող անձի կողմից:

Սույնով Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ-ն հավաստում է, որ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում պարտավորվում է, ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել որակավորման ապահովում

Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ (Ալբերտ Ասատրյան )

(Մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, ղեկավարի անուն ազգանունը))

(ստորագրությունը)

Կ.Տ.

Digitally signed by ASATRYAN ALBERT 1707860173
Date: 2023.09.05 14:29:28 AMT

**Հավելված N 1.2****
«---ԷԱՃԾՁԲ---/---»* ծածկագրով
էլեկտրոնային աճուրդի հրավերի

ՁԵՎ
ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

## 1. Կազմակերպությունը

*1.1. Կազմակերպության տվյալները*

| | |
|---|---|
| 1.1.1. Անվանումը | «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ |
| 1.1.2. Անվանումը լատինատառ | "Crowe and Asatryans" LLC |
| 1.1.3. Պետական գրանցման համարը | 273.110.766442 |
| 1.1.4. Գրանցման օրը, ամիսը, տարին | 02.05.2013 |
| 1.1.5. Գրանցման հասցեն | Ք. Երևան, Երվանդ Քոչար 21, բն. 18 |
| 1.1.6. Գրանցման պետությունը | Հայաստանի Հանրապետություն |
| 1.1.7. Գործադիր մարմնի ղեկավարի անունը և ազգանունը | Ալբերտ Ասատրյան |

*1.2. Հայտարարագիրը ներկայացնող անձը*

| | |
|---|---|
| 1.2.1. Հայտարարագիրը ներկայացնող անձի անունը և ազգանունը | Ալբերտ Ասատրյան |
| 1.2.2. Հայտարարագիրը ներկայացնող անձի պաշտոնը | Տնօրեն |

*1.3. Հայտարարագրի ներկայացումը*

| | |
|---|---|
| 1.3.1. Հայտարարագրի ստորագրման օրը, ամիսը, տարին | 05. 09. 2023 |
| 1.3.2. Հայտարարագրի էջերի քանակը | 10 |

| | |
|---|---|
| 1.3.3. Հայտարարագիրը ներկայացնող անձի ստորագրությունը | Digitally signed by ASATRYAN ALBERT 1707860173<br>Date: 2023.09.05 14:21:29 AMT |

## 2. Բաժնետոմսերի ցուցակման տվյալները

*2.1. Բաժնետոմսերի ցուցակման տվյալները*

| | |
|---|---|
| 2.1.1. Ֆոնդային բորսայի անվանումը | |
| 2.1.2. Հղումը բորսայում առկա փաստաթղթերին | |

*2.2. Կազմակերպությունը վերահսկող իրավաբանական անձի տվյալները*

| | |
|---|---|
| 2.2.1. Անվանումը | |
| 2.2.2. Անվանումը լատինատառ | |
| 2.2.3. Պետական գրանցման համարը | |
| 2.2.4. Գրանցման օրը, ամիսը, տարին | |
| 2.2.5. Գրանցման հասցեն | |
| 2.2.6. Գրանցման պետությունը | |
| 2.2.7. Գործադիր մարմնի ղեկավարի անունը և ազգանունը | |

*2.3. Վերահսկողության մակարդակը*

| | |
|---|---|
| 2.3.1. Մասնակցության չափը (%) | |
| 2.3.2. Մասնակցության տեսակը | ☐ Ուղղակի մասնակցություն<br>☐ Անուղղակի մասնակցություն |

## 3. Պետության, համայնքի կամ միջազգային կազմակերպության մասնակցությունը

### *3.1. Պետության կամ համայնքի մասնակցությունը*

| | |
|---|---|
| 3.1.1. Պետության անվանումը | |
| 3.1.2. Համայնքի անվանումը | |
| 3.1.3. Մասնակցության չափը (%) | |
| 3.1.4. Մասնակցության տեսակը | ☐ Ուղղակի մասնակցություն<br>☐ Անուղղակի մասնակցություն |

### *3.2. Միջազգային կազմակերպության մասնակցությունը*

| | |
|---|---|
| 3.2.1. Միջազգային կազմակերպության անվանումը | |
| 3.2.2. Միջազգային կազմակերպության անվանումը լատինատառ | |
| 3.2.3. Մասնակցության չափը (%) | |
| 3.2.4. Մասնակցության տեսակը | ☐ Ուղղակի մասնակցություն<br>☐ Անուղղակի մասնակցություն |

**4. Իրական շահառուի տվյալները**

*4.1. Անձի ինքնությունը հավաստող տվյալները*

| | |
|---|---|
| 4.1.1. Անունը | Ալբերտ |
| 4.1.2. Ազգանունը | Ասատրյան |
| 4.1.3. Անունը (լատինատառ) | Albert |
| 4.1.4. Ազգանունը (լատինատառ) | Asatryan |
| 4.1.5. Քաղաքացիությունը | Հայ |
| 4.1.6. Ծննդյան օրը, ամիսը, տարին | 07.07.1986 |

*4.2. Անձը հաստատող փաստաթուղթը*

| | |
|---|---|
| 4.2.1. Փաստաթղթի տեսակը | Անձնագիր |
| 4.2.2. Փաստաթղթի համարը | AU0331891 |
| 4.2.3. Տրամադրման օրը, ամիսը, տարին | 28.06.2021 |
| 4.2.4. Տրամադրող մարմինը | 011 |
| 4.2.5. ՀԾՀ կամ համարժեք համարը | 1707860173 |

*4.3. Անձի հաշվառման հասցեն*

| | |
|---|---|
| 4.3.1. Պետությունը | Հայ |
| 4.3.2. Համայնքը | Երևան |
| 4.3.3. Վարչատարածքային միավորը | Կենտրոն |
| 4.3.4. Փողոցի անվանումը, շենքը (տունը), բնակարանը | Երվանդ Քոչար 21, բն. 18 |

*4.4. Անձի բնակության հասցեն*

| | |
|---|---|
| 4.4.1. Պետությունը | ՀՀ |
| 4.4.2. Համայնքը | Երևան |
| 4.4.3. Վարչատարածքային միավորը | Կենտրոն |
| 4.4.4. Փողոցի անվանումը, շենքը (տունը), բնակարանը | Երվանդ Քոչար 21, բն. 18 |

*4.5. Իրական շահառու հանդիսանալու հիմքերը (բացառությամբ՝ ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպությունների)*

| | |
|---|---|
| ☐v ա. ուղղակի կամ անուղղակի տիրապետում է տվյալ իրավաբանական անձի՝ ձայնի իրավունք տվող բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայերի) 20 և ավելի տոկոսին կամ ուղղակի կամ անուղղակի կերպով ունի 20 և ավելի տոկոս մասնակցություն իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում | |
| 4.5.1. Մասնակցության չափը (%) | 100 |
| 4.5.2. Մասնակցության տեսակը | ☐ Ուղղակի մասնակցություն<br>☐ Անուղղակի մասնակցություն |
| ☐ բ. տվյալ իրավաբանական անձի նկատմամբ իրականացնում է իրական (փաստացի) վերահսկողություն այլ միջոցներով | |
| ☐ գ. հանդիսանում է տվյալ իրավաբանական անձի գործունեության ընդհանուր կամ ընթացիկ ղեկավարումն իրականացնող պաշտոնատար անձ այն դեպքում, երբ առկա չէ «ա» և «բ» կետերի պահանջներին համապատասխանող ֆիզիկական անձ | |

*4.6. Իրական շահառու հանդիսանալու հիմքերը (ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպությունների համար)*

| | |
|---|---|
| ☐ ա. ուղղակի կամ անուղղակի կերպով տիրապետում է տվյալ իրավաբանական անձի՝ ձայնի իրավունք տվող բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայերի) 10 և ավելի տոկոսին կամ ուղղակի կամ անուղղակի կերպով ունի 10 և ավելի տոկոս մասնակցություն իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում | |
| 4.6.1. Մասնակցության չափը (%) | |

| | |
|---|---|
| 4.6.2. Մասնակցության տեսակը | ☐ Ուղղակի մասնակցություն<br>☐ Անուղղակի մասնակցություն |

| |
|---|
| ☐ բ. իրավունք ունի նշանակելու կամ հեռացնելու իրավաբանական անձի կառավարման մարմինների անդամների մեծամասնությանը |
| ☐ գ. իրավաբանական անձից անհատույց ստացել է հաշվետու տարվան նախորդող տարվա ընթացքում տվյալ իրավաբանական անձի ստացած շահույթի առնվազն 15 տոկոսի չափով օգուտ |
| ☐ դ. իրավաբանական անձի նկատմամբ իրականացնում է իրական (փաստացի) վերահսկողություն այլ միջոցներով |
| ☐ ե. հանդիսանում է տվյալ իրավաբանական անձի գործունեության ընդհանուր կամ ընթացիկ ղեկավարումն իրականացնող պաշտոնատար անձ այն դեպքում, երբ առկա չէ «ա»-«դ» կետերի պահանջներին համապատասխանող ֆիզիկական անձ |

*4.7. Իրական շահառուի կարգավիճակի վերաբերյալ տեղեկությունները*

| | |
|---|---|
| 4.7.1. Իրական շահառու դառնալու օրը, ամիսը, տարին | 02.05.2012 |
| 4.7.2. Կազմակերպության նկատմամբ վերահսկողության իրականացումը | ☐v Առանձին<br>☐ Փոխկապակցված անձանց հետ համատեղ |
| 4.7.3. Ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպության իրական շահառուն հանդիսանում է պաշտոնատար անձ կամ նրա ընտանիքի անդամ | ☐ Այո<br>☐v Ոչ |

*4.8. Իրական շահառուի կոնտակտային տվյալները*

| | |
|---|---|
| 4.8.1. Էլ. փոստի հասցեն | Albert.asatryan@crowe.am |

| | |
|---|---|
| 4.8.2. Հեռախոսահամարը | (+374) 99 54 33 88 |

## 5. Միջանկյալ իրավաբանական անձինք

*5.1. Կազմակերպության տվյալները*

| | |
|---|---|
| 5.1.1. Անվանումը | |
| 5.1.2. Անվանումը լատինատառ | |
| 5.1.3. Պետական գրանցման համարը | |
| 5.1.4. Գրանցման օրը, ամիսը, տարին | |
| 5.1.5. Գրանցման հասցեն | |
| 5.1.6. Գրանցման պետությունը | |
| 5.1.7. Գործադիր մարմնի ղեկավարի անունը և ազգանունը | |

*5.2. Իրական շահառուի տվյալները*

| | |
|---|---|
| 5.2.1. Իրական շահառու(ներ)ի անունը և ազգանունը, ում համար կազմակերպությունը հանդիսանում է միջանկյալ իրավաբանական անձ | |
| | |
| | |
| | |
| | |

*5.3. Միջանկյալ իրավաբանական անձի բաժնետոմսերի ցուցակման տվյալները*

| | |
|---|---|
| 5.3.1. Ֆոնդային բորսայի անվանումը | |
| 5.3.2. Հղումը բորսայում առկա փաստաթղթերին | |

## 6. Լրացուցիչ նշումներ

| |
|---|
| *Լրացուցիչ տեղեկություններ կամ հավելյալ պարզաբանումներ, որոնք առնչվում են հայտարարագրում լրացված կամ լրացման ենթակա տվյալներին* |
| Digitally signed by ASATRYAN ALBERT 1707860173<br>Date: 2023.09.05 14:23:27 AMT |

**Приложение № 1**
**к приглашение на электронный аукцион**
**под кодом ԴԴ-ԷԱՃԾՁԲ-23/03**

# ЗАЯВЛЕНИЕ УЧАСТИЕ В ЭЛЕКТРОННОМ АУКЦИОНЕ

Кроу энд Асатрянс ООО заявляет, что желает участвовать влоте (лотах) 1 объявленного Судебный департамент под кодом ԴԴ-ԷԱՃԾՁԲ-23/03 распределение процедуры электронного аукциона (далее-процедура)

Кроу энд Асатрянс ООО заявляет и заверяет, что является резидентом Հայաստանի Հանրապետություն.

Данные Кроу энд Асатрянс ООО следующие:

Учетный номер налогоплательщика 02618043

Банковский счет 2052022188681001

Адрес деятельности Аргишти 7, Дом Москвы, Ереван, Армения

Номер телефона +37499543388

Название на русском языке Кроу энд Асатрянс ООО

Настоящим Кроу энд Асатрянс ООО объявляет и подтверждает,что:

1) 1) Удовлетворяет требованиям к праву участия установленным приглашением под кодом ԴԴ-ԷԱՃԾՁԲ-23/03, и обязуется в случае признания отобранным участником в порядке и сроки, установленные настоящим приглашением представить обеспечение квалификации в размере ценового предложения .

2) В пределах участия в процедуре

- не допускал и (или) не допустит злоупотребления недобросовестной конкуренции, доминирующим положением и антиконкурентного соглашения,
- отсутствует случай установленного приглашением одновременного участия взаимосвязанных с Кроу энд Асатрянс ООО лиц и (или) учрежденных Кроу энд Асатрянс ООО организаций, либо организаций, имеющих принадлежащую Кроу энд Асатрянс ООО долю (пай) в размере более пятидесяти процентов,
- ниже представляет данные того физического лица (физических лиц), которое (которые) на день подачи заявки прямо или косвенно владеет (владеют) более чем десятью процентами голосующих акций (долей, паев) в уставном капитале участника, включая акции на предъявителя, или данные лица (лиц), обладающего (обладающих) правом назначать или освобождать от должности членов исполнительного органа участника, либо получающего (получающих) более пятнадцати процентов от прибыли, полученной в результате осуществления участником предпринимательской или иной деятельности (реальные бенефициары) и подтверждает, что информация относительно реальных бенефициаров действительна и не содержит недостоверных сведений.

| N | Имя, фамилия, отчество | Для граждан Республики Армения — тип и номер идентификационной карты или паспорта, либо предусмотренного законодательством Республики Армения документа, удостоверяющего личность | Для иностранных граждан — тип и номер предусмотренного законодательством соответствующей страны документа, удостоверяющего личность |
|---|---|---|---|
| 1 | | | |

3) обеспечена безопасность и конфиденциальность уникального кода (PIN-кода), предоставленного системой электронного аукциона после представления заявления-заявления, и любое действие, вытекающее из участия в процедуре электронного аукциона с его использованием, совершается лицом, имеющим соответствующие полномочия.

Кроу энд Асатрянс ООО (Альберт Асатрян )

наименование участника (должность,имя, фамилия руководителя)

(подпись)

Digitally signed by ASATRYAN ALBERT 1707860173
Date: 2023.09.05 14:24:56 AMT

Ч.S.

«ԷԿԵՆԳ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0010,
Տիգրան Մեծի 4, 5-րդ հարկ
Հեռ՝ 060 460405
info@ekeng.am
www.ekeng.am

h.3553
20.09.2023թ.

**ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ**
**ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐԻ**
**ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ**
**ՏԵՂԱԿԱԼ Ա. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Վարդապետյան

Ի պատասխան Ձեր՝ 2023 թվականի սեպտեմբերի 19-ի ԴԴ-3-Ե-6739 գրության՝ հայտնում ենք, որ ներկայացված փաստաթուղթը չի պարունակում էլեկտրոնային ստորագրության հավաստագիր:

Հարգանքով՝
«ԷԿԵՆԳ» ՓԲԸ տնօրեն
Լ. Ավետիսյան

Recoverable Signature

X

Signed by: AVETISYAN LEONID 1610790049

ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ ՓՄ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
N 1423
22.09.23

*Ծրագրերի կառավարման բաժին*
*+374 60 464 501 (204)*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Վեբ կայք՝ www.minfin.am, ֆինանս.հայ
Էլ. փոստ՝ secretariat@minfin.am
Հեռ.՝ (+374 11) 800 011

№ 03/26-1/18052-2023

ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆԵՐԻՆ (ըստ ցուցակի)

Հայտնում ենք, որ 11/09/2023թ. ժամը 11:24-ից մինչև ժամը 11:58-ը էլեկտրոնային աճուրդների համակարգը եղել է անհասանելի, ինչի արդյունքում խոչընդոտվել է ինչպես ժամը 11:24-ից մինչև ժամը 11:58-ն անցկացվելիք աճուրդների, այնպես էլ նշված ժամանակահատվածում հրավերներով հայտերի ներկայացման վերջնաժամկետ սահմանված ընթացակարգերին մասնակցության հայտերի ներկայացման բնականոն ընթացքը (խափանված չափաբաժինների և ընթացակարգերի ցանկը կցվում է):

Միաժամանակ հայտնում ենք, որ ՀՀ կառավարության 02/05/2019թ. N 516-Ն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված գնման ընթացակարգը (տվյալ չափաբաժինը) «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարվում է չկայացած, եթե տվյալ ընթացակարգի շրջանակում սահմանված հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալու պահի դրությամբ համակարգը խափանված է:

Առդիր՝ 1 ֆայլ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

9/19/2023

X

ԱՎԱԳ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN AVAG 2003930574

ԱՎԱԳ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Կատարող՝ Ն. Մուրադյան
Հեռ. 011289328

Տեղեկատվություն

11/09/2023թ. ժամը 11:24-ից մինչև ժամը 11:30-ն ընկած ժամանակահատվածում խափանված աճուրդների վերաբերյալ՝

| N | Պատվիրատու | ծածկագիր | աճուրդ | չկայացած |
|---|---|---|---|---|
| 1 | **ՀՀ Դատական դեպարտամենտ** | **ԴԴ-ԷԱՃԾՁԲ-23/03** | **11/09/2023թ. ժամը 11:00** | 1 |
| 2 | **ՀՀ պետական եկամուտների կոմիտե** | **ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-23/12** | **11/09/2023թ. ժամը 11:00** | 1 |

11/09/2023թ. ժամը 11:24-ից մինչև ժամը 11:58-ն ընկած ժամանակահատվածում խափանված ընթացակարգի վերաբերյալ

| N | Պատվիրատու | ծածկագիր | հայտերի ընդունման վերջնաժամկետ |
|---|---|---|---|
| 1 | **ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով** | **ՀՌՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/23** | **11/09/2023թ. ժամը 12:00** |
| 2 | **ՀՀ վարչապետի աշխատակազմ** | **ՎԱ-ԱԱՏՄ-ԷԱՃԱՊՁԲ-23/32** | **11/09/2023թ. ժամը 12:00** |
| 3 | **Երևանի պետական համալսարան հիմնադրամ** | **ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/81** | **11/09/2023թ. ժամը 12:00** |

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին**

Ընթացակարգի ծածկագիրը **«ԴԴ-ԷԱՃԾՁԲ-23/03»**

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար ներքին աուդիտի ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-23/03» ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին տեղեկատվությունը՝

| **Չափաբաժնի համար** | **Գնման առարկայի համառոտ նկարագրություն** | **Գնման ընթացակարգի մասնակիցների անվանումները՝այդպիսիք լինելու դեպքում** | **Գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվել համաձայն՝"Գնումների մասին" ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի** /ընդգծել համապատասխան տողը/ | **Գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու հիմնավորման վերաբերյալ համառոտ տեղեկատվություն** |
|---|---|---|---|---|
| 1 | Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ՝ Դատական դեպարտամենտի ներքին աուդիտի ծառայություն | Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ<br>ՍՄԱՐՏ ԱՈՒԴԻՏ ՍՊԸ<br>Ֆոր Էյ Քնսալթինգ ՓԲԸ | 1-ին կետի<br>2-րդ կետի<br>3-րդ կետի<br>**4-րդ կետի** | Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության N 03/26-1/18052-2023 գրությունը՝ «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-23/03» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարվել է չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն: |

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-23/03» ծածկագրով գնման ընթացակարգի համակարգող Գայանե Դադիվանյանին:

Հեռախոս՝ **010-511-783**:

Էլեկտրանային փոստ՝ **ddgnumner@mail.ru**:

Պատվիրատու՝ **Դատական դեպարտամենտ**: